

Շարունակում Ս. Էսե

# ՔՍԱՆՆԵՐՈՒ ՈԳԵԿՈՉՄԱՆ 93-ՐԴ ԱՄԵԱԿ

Ընկեր Շիրազ Ճերեճեան, դիտել տուաւ որ այսօր արդէն իսկ իրականութիւն դարձած է Տօթթ. Պեննի հարազատ արտայայտութիւնը. «Ղուբ մեզ քսաններս կը կախէք, բայց վաղը կրեւելքի հորիզոնին վրայ քսան հազարներ պիտի հետեւին մեր քայլերուն»: Ընկերը իր խօսքը աւարտեց ընդգծելով, որ հայ ժողովուրդը իւրացուցած է քսաններու պատգամը, որովհետեւ՝ շնորհիւ այդ պատգամին, հայ ժողովուրդը վերակերտեց իր պետականութիւնը ու ազատագրեց կրցախը:



Ճարկեպակի գետնում

Սոցիալ Դեմոկրատ Զնչակեան Կուսակցութեան Լիբանանի Շրջանի Վարիչ Մարմնի խօսքը փոխանցեց ընկ. Տօթթ. Սկրտիչ Պետրոսեան: Ան նշեց, թէ կարելի չէ անդրադառնալ քսան կախաղաններու պատմական դերակատարութեան առանց նկարագրելու Զնչակեան կուսակցութեան պատմաբաղաճական երեւոյթը: Ընկերը ըսաւ, որ հնչակեանները առաջինն էին, որ հայ իրականութեան մէջ բարձրացուցին զինեալ պայքարի գաղափարը, հետեւաբար եւ վճարեցին անոր գինը:



Ընկ. Շիրազ Ճերեճեան

Ապա, ընկ. Տօթթ. Սկրտիչ Պետրոսեան կեդրոնացաւ քսաններէն թաղուելիք դասերուն, որ խտացուց հետեւեալ խորագիրներուն տակ. գաղափարի հանդէպ անսահման հաւատարմութիւն, հայրենիքի հանդէպ անզիջող ըլլալու խորհուրդը, որքան ազգային թշնամի դիտելու խորհուրդը:



Հ.Ս.Ս.-ի փողերախումբը

Ընկ. Տօթթ. Սկրտիչ Պետրոսեան անդրադարձաւ հայ տարեգրութեան մէջ Զնչակեան կուսակցութեան պանծալի սխրագործութիւններուն, ընդգծելով, որ մեր նահատակները ճիշդ է, որ ֆիզիքապէս մահացան, սակայն անոնք կ'ապրին իւրաքանչիւր հայու սրտին ու հոգիին մէջ:

Յարգելի ընկերը իր խօսքը աւարտեց շեշտելով, որ Լիբանանը կ'ուզեց տեսնել ազատ, անկախ, միասնական, իր սահմանները ճշդուած, առանց բռնաբարուելու Իսրայէլի եւ այլ դրացի պետութիւններու կողմէ. «Մենք կը ցանկանք Լիբանանի բոլոր խաւերու առաւել մերձեցումը եւ բոլորին համախմբումը Լիբանանեան դրօշին ներքեւ, որովհետեւ՝ Լիբանանը եւ լիբանանցիները անոնց շարքին նաեւ լիբանանահայերս արժանի ենք պարելու խաղաղ, միասնական եւ մէկ պետականութեան սահմաններու մէջ», իր խօսքը աւարտեց ընկ. Տօթթ. Սկրտիչ Պետրոսեան:

Տիկին Նորա Սարաֆեան-Տեմիրճեան ամուսնեց Գառնիկ Աղդարեանի «Պայագիտ» քերթածը եւ Յովհաննէս Շիրազի «Ամենայն Սրտով» հայրենասիրական բանաստեղծութիւնը:

Ապա, բեմ իրականացաւ Ա.Գ.Յ. Կուսակցութեան Կեդրոնական վարչութեան անդամ, պետական երեսփոխան ընկ. Տօթթ. Շիրի Ճերեճեան փոխանցելու օրուան պատգամը:


Յարգելի ընկերը նախ ծանրացաւ գաղափարական այն արժեքներուն վրայ, որոնց հաւատացած էին Զնչակեան քսանները ու այսօր եւս կը շարունակեն հաւատալ անոնց

ժառանգորդները. ազատութիւն արդարութիւն, անկախութիւն, գերիշխանութիւն: Ընկերը ըսաւ, որ գաղափարական որեւէ կազմակերպութեան մը բարոյական արժեքափոխը խորհրդանշող այս խորհուրդները անժամանցելի են ու չունին վաղեմութիւն: Ընդհակառակը՝ իր անկախութեան համար պայքարող որեւէ ժողովուրդի համար անոնք սրբութիւններ են, ու կը մնան այդպիսին, մինչեւ ամբողջական յաղթանակ: «Քսաններու պահանջները ունէ իրաւագուրկ ու պահանջատէր ժողովուրդի պահանջ է» ըսաւ ան, դիտել տալով, որ Լիբանան եւս այսօր կը պայքարի վերականգնելու ու վերագտնելու իր անկախութիւնը: Ընկերը ընդգծեց, որ Լիբանան տակաւին կը բոլորէ քաղաքական ծանր իրավիճակ մը: Ծիշո՞ւ է, որ խորհրդարանը ընտրեց հանրապետութեան նախագահը, սակայն երկրին կառույցները՝ խորհրդարանը, կառավարութիւնը կը մնան անդամալոյծ: Կա-



Ընկ. տօթթ. Սկրտիչ Պետրոսեան

ռավարութեան կազմութեան համար ընդդիմութիւնը կը ներկայացնէ անտրամաբանական առաջարկութիւններ, երբ միւս կողմէ, ընդդիմութիւնը ամէն գնով կ'աշխատի երկրին մէջ պետութեան մէջ պետութիւն ստեղծել: Ընկ. Տօթթ. Շիրի Ճերեճեան թուեց լիբանանցի ժողովուրդին բոլորած ընկերային, տնտեսական դժուարութիւնները, եւ հարց տուաւ, թէ ինչպէ՞ս կարելի պիտի ըլլայ յաղթահարել զանոնք երբ երեսփոխանները կը պահուին սարսափի մթնոլորտին տակ, վտանգուած է անոնց կենքը, չեն կրնար աշխատիլ, անդամալուծուած են խորհրդարանն ու կառավարութիւնը: Այս առիթով, ան ընդգծեց, թէ առաջնայնութիւնը այսօր երկրին ապահովութեան վերականգ-



Ընկ. Անդրանիկ Սալպաշեան

նումն ու քաղաքացիին մօտ վստահութեան վերականգնումը պիտի ըլլայ, որմէ պիտի բխին ընկերային ու տնտեսական բարեկարգութիւններու քայլերը:

Ընկեր Տօթթ. Շիրի Ճերեճեան դատապարտեց սարսափի մթնոլորտ ստեղծելու միտումները, ըսելով, որ «պիտի մնանք պահանջատէր մինչեւ կատարուած քաղաքական ոճիւրներու հեղինակներուն բացառապատումը: Պիտի պայքարինք մինչեւ գերիշխան անկախ ու ազատ Լիբանանի գոյառումը»:

Ընկերը խօսքէն ետք ցուցադրուեցաւ Զնչակեան Զսան անմահներուն նուիրուած տեսաերիզ մը, պատրաստուած արուեստագետ Վարդան Սկրտիչեանի կողմէ:

Քսաններու ոգեկոչման 93-ամեակի նուիրուած հանիսութեան տեղի ունեցաւ գնահատագիր - վկայականներու բաշխում: Բեմ բարձրացաւ Ա.Գ.Յ. Կուսակցութեան Վարիչ Մարմնոյ



Վկայագիր ստացող ընկերները

ատենապետ ընկ. Սարգիս Զափութեան եւ յատուկ պատրաստութեամբ վկայագիրներ բաժնեց տարբեր տարիներուն Վարիչ Մարմնոյ անդամակցած ու ծառայութիւն մատուցած ընկերներու: Ընկերներ՝ Յովհաննէս Ճերեճեան, Կարօ Պաղարեան, Գրիգոր Պապոյեան, Մելքոն Սեֆերեան, Սարգիս Սարգիսեան, Յովհաննէս Ուղուրեան, Յարութիւն Կերկերեան, Միսաք Արզումանեան հերթաբար բեմ բարձրացան ստանալու իրենց



Կ'ամուսնեց տիկ. Նորա Սարաֆեան-Տեմիրճեան

վկայագիրները: Զանդիսաւոր այս պահէն ետք, օրուան հանդիսավարը յանուն Ա.Գ.Յ. Լիբանանի Շրջանի Վարիչ Մարմնին շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնք սիրայօժարօրէն իրենց մասնակցութիւնը բերին Զսան նահատակներու մատակարարութեան աշխատանքներուն ինչպէս նաեւ բոլոր անոնց, որոնք սատարեցին Զսաններու ոգեկոչման հան-



Կ'երգէ Պերճ Նազաշեան

դիսութեան յաջողութեան: Նշենք, թէ պատրաստուած մատաղ հանդիսութեան աւարտին բաժնուեցաւ ժողովուրդիկ:

Քսաններու ոգեկոչման հանդիսութիւնը եզրափակուեցաւ ազգային հայրենասիրական երգերու մեկնաբան Պերճ Նազաշեանի ճոխ երգերով:

## ՇՈՒԲԵՏԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՄԵՐԺԵՑ ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԸՆԿՆԱԶՈՒՄԸ ՊԱՀԱՆՁՈՂ ԲԱՆԱԶԵԻՆ

Շուբեթի խորհրդարանը 37-ի դէմ 245 քուէներով որոշած է մերժել Հայկական Յեղասպանութեան Ընկերակցութեան Ընթացքի խորհրդարանէն կը բացակէին 66 երեսփոխաններ, իսկ մէկ երեսփոխան ձեռնպահ մնաց:

Շուբեթի խորհրդարանին մէջ երկար բանավեճ մը տեղի ունեցած է այս հարցով, որու ընթացքին իշխող դաշինքն ու ընդդիմութեան ընկերակցութեան ժողովրդավար հատուածը դէմ արտայայտուած են բանաձեւից, իսկ կանաչներն ու ձախակողմեանները անոր վաւերացումը կենսական նկատած են:

Բանաձեւին ընդդիմացողները յայտնած են, թէ 1948-ին ՄԱԿ-ի կողմէ վաւերացուած Յեղասպանութեան Ուխտը ի օրու չէր 1915-ին, սակայն ընդունած են, թէ հայերուն եւ ասորիներուն դէմ գործադրուած ջարդերը «կրնային ցեղասպանութիւն նկատուիլ»: Անոնք նաեւ, հիմնականին մէջ որդեգրելով Թուրքիոյ պաշտօնական կեցուածքը, աւելցուցած են, թէ Հայկական Յեղասպանութեան իրողութեան շուրջ պատմաբաններու մէջ տարակարծութիւններ կան մինչեւ օրս: Բանաձեւին ընդդիմացող երեսփոխանները նաեւ շեշտած են, թէ ներկայ հանգրուանին մնան բանաձեւի մը որդեգրումը վնաս պիտի հասցնէ Թուրքիա-Շուբեթ յարաբերութեանց եւ պատճառ պիտի դառնայ, որ ծայրայեղականներուն դիրքը զօրանայ Թուրքիոյ մէջ:

Աւելի քան երեք ժամ տեւած բանավեճին ընթացքին ձախակողմեան երեսփոխան Համա Լիմն ըսաւ մը առիթներով մեղ կացութեան մատնած է իշխանաձեւ երեսփոխանները, անոնցմէ երեք պարզ հարցումներու պատասխանները պահանջելով: Հարցումներն էին՝

ա. Որո՞նք են Հայկական Յեղասպանութեան իրողութիւնը դրժող «մասնագետները»:

բ. Եթէ Հայկական Յեղասպանութիւնը ՄԱԿ-ի ուխտէն առաջ տեղի ունեցած ըլլալուն պատճառով կարելի չէ ցեղասպանութիւն կոչել, ապա Հրեական ողջակիզումը ինչո՞ւ ցեղասպանութիւն կը նկատուի:

գ. Թուրքիոյ մէջ ծայրայեղականներու կարծեցեալ սպառնալիքները ինչո՞ւ պիտի ազդեն Շուբեթի խորհրդարանին մէջ խօսքի ազատութեան վրայ: Բնականաբար բանաձեւին ընդդիմացողները համոզուելու ոչ մէկ պատասխան ներկայացուցին:

Կանաչներու երեսփոխանական պորթն Մարս Փերթոֆթ, որ բանաձեւին հեղինակներէն մէկն էր, Հայկական Յեղասպանութեան իրողութեան շուրջ կարծեցեալ տարակարծութիւնը մանազուց կենսոլորտի ջերմացումը շուրջ վերջին տասնամեակներուն տեղի ունեցող վեճին: Ան յայտնած է, թէ քանի մը տարի առաջ որոշ մասնագետներ համաձայն էին այն պնդումներուն, թէ երկրագունդը բնականօրէն աւելի արագ կը ջերմանայ, սակայն հիմա ջախջախիչ մեծամասնութիւնը ընդունած է այդ իրողութիւնը:

Երկու երեսփոխաններ միայն իրենց կուսակցութեանը որոշումներուն դէմ զայով բանաձեւին ի նպաստ քուէարկեցին: Անոնցմէ մէկը ասորի ծագումով Երմազ Քերիմն էր, Ընկերակցութեան ժողովրդավար կուսակցութենէն, իսկ երկրորդը՝ նոյն կուսակցութենէն Լեւոնար Սարբետուան էր: